

ՄՏԵՓԱՆՅԱՆ ՀԱՄԻԿ

ՀԱՅԵՐԸ ԲԻԹԼԻՍՈՒԿ ԵՎ ՀԱՅԱՏԱՌ ՔՐԴԵՐԵՆ ՁԵՌԱԳԻՐ ՈՒ ՏՊԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բիթլիսի (Բաղեշի) մասին մեզ հասած հայ, արաբ, բյուզանդացի հեղինակների բազում վկայությունները հնարավոր են դարձնում նրա պատմության կարևոր շրջանների ուրվագծումը:

Հայկական մատենագրության մեջ Բաղեշ (Բաղիշոյ բերդ) անվանումն առաջին անգամ հիշատակում է Սեբեոսը (VII դ.): IX-X դդ. պատմիչ Թովմա Արծրունին «շահաստան Բաղեշ» է կոչել այս հարուստ շրջանը²:

Բաղեշը հայերի համար մշակութային կարևոր կենտրոն է եղել՝ շնորհիվ գրչության կենտրոններ հանդիսացած վանքերի, եկեղեցիների, դպրոցների: XVI-XVIII դդ. Բաղեշում կրթություն ստացած հայտնի դեմքերից են եղել Վարդան, Առաքել, Ներսես Բաղեշցիները, Պոլսի և Երուսաղեմի պատրիարքներ Հովհաննես Կոլոտը, Հակոբ Նայյանը, տաղասաց Կարապետ Բաղիշեցին և ուրիշներ: Բաղեշի դպրոցը մեծագույն ավանդ է ունեցել հայ մատենագրության, մշակութային զարգացման մեջ: Այստեղ գրի են առնվել և հեղինակվել բազմաթիվ ձեռագրեր: Այս առումով ամենից հայտնին Ամրդոլու վանքն էր, որը հռչակված էր որպես գրչության կենտրոն:

XIII դ. արաբ աշխարհագիր Յակուտ Ալ-Համավին Բիթլիսի մասին արաբական արշավանքների շրջանում «Արմինիայի Բաղլիս»³ է գրում: Շատերն այն հիշատակել են որպես մրգառատ, ընտիր մրգերի քաղաք, որտեղ ամեն տուն այգի, բանջարանոց է ունեցել, որտեղ ամեն տեսակ միրգ է աճել:

1514 թ. Չալդրանի ճակատամարտից հետո այս շրջանը գրավվել ու միացվել է Օսմանյան կայսրությանը: Բիթլիսի քրդական իշխանու-

¹ Պատմութիւն Սեբեոսի եպիսկոպոսի ի Հերակլին, Թիֆլիս, 1912, էջ 227, 228:

² Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Երևան, 1978, էջ 127:

³ Տեր-Ղևոնդյան Ա., Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965, էջ 230:

թյունը, որ խանութային կամ հյուրումեթություն է կոչվել, առանձնապես հզոր է եղել XVI-XVIII դդ.: Այստեղ բնակություն էին հաստատել քրդեր ու եզդիներ:

Բիթլիս քաղաքը, ըստ Լինչի⁴ տեղեկության, ունեցել է մոտ 30 հազ. բնակչություն, որից 10 հազարը հայեր էին: Բիթլիսն առևտրական կարևոր կենտրոն է եղել:

Առևտուրը, արհեստները, գյուղատնտեսությունը Բիթլիսում հիմնականում հայերի ձեռքում են գտնվել. 3 շուկա, 1200 խանութ, զարգացած կաշեգործություն, դարբնություն, զինագործություն, ջուլիակագործություն, դերձակություն, ներկարարություն, մեծ համբավ ունեցող «շիլա» տեղական կարմիր կտոր, որն արտահանում էին: XIX դարում ստեղծվում են մանուֆակտուրաներ, փոքրիկ գործարաններ, այստեղ սկսել էին մուտք գործել կապիտալիստական հարաբերությունները: Ազգագրական հարուստ և գունագեղ սովորույթներ ուներ այս գավառը:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, Մեծ եղեռնի ժամանակ քաղաքը հայաթափ է լինում:

Հայերի մշակութային կյանքի զարգացման կարևոր միջոցներից է եղել հայատառ թուրքերեն (*ermeni harfli türkçe*) գրականությունը, քանզի Բիթլիսը Արևմտյան Հայաստանի առավելապես թրքախոս գավառների թվում է եղել: Պատճառներից մեկն այն է եղել, որ Օսմանյան կայսրության որոշ գավառներում մահվան սպառնալիքով արգելված է եղել հայոց լեզվի օգտագործումը: Ապահովության համար շատերը հայկական անվանը զուգահեռ թուրքական անուններ էլ են ունեցել:

Հայկական տառերի միջոցով, սակայն թուրքերենով ստեղծված գրականությունն օգնել է, որպեսզի հայերն այս գրականության միջոցով շարունակեն իրենց հոգևոր կապը սեփական ժողովրդի, ավանդական լուսավորչական դավանանքի հետ: Հայատառ թուրքերեն գրականությունը և մամուլը ինչպես Արևմտյան Հայաստանի տարբեր

⁴ Հենրի Ֆինիս Բլու Լինչ (Lynch), (1862-1913 թթ.), իռլանդացի հայագետ, աշխարհագետ, ճանապարհորդ, հասարակական-քաղաքական գործիչ, որի տատը սերասուտացի հայուհի է եղել: Տե՛ս Линч Х. Ф. Б., Армения... , т. 2, Тифлиς, 1910, стр. 186-200.

վայրերում, այնպես էլ այս գավառում մեծ տարածում է գտել: Այն ինքնուրույն, հարուստ և բազմակողմանի զարգացում ապահովող գրականություն է եղել, որը ժամանակի ընթացքում թրքախոս հայերին պիտի վերադարձներ դեպի հայախոսություն:

Հայատառ թուրքերեն գրքերի ու պարբերականների մեր կազմած մատենագիտությունն⁵ ավելի քան 2000 անուն գիրք և 150-ի մոտ պարբերականներ է պարունակում: Գրքերը և մամուլը, որ հիմնականում Պոլսից էր գալիս, ձեռքից ձեռք էր անցնում, կարդացվում սրճարաններում և թեյարաններում: Այս թերթերն իրենց թղթակիցներն են ունեցել երկրով մեկ: Այսպիսով, շնորհիվ այս պարբերականների, ընթերցողները հնարավորություն են ունեցել տեղեկություններ ու նորություններ ունենալու ոչ միայն Պոլսի, այլև կայսրության տարբեր վայրերի ու ազգության հպատակների կյանքի մասին:

Շատ կարևոր մի հանգամանք ևս: Ինչպես Պոլսում և ուրիշ մեծ քաղաքներում, այնպես էլ գավառներում և գավառակներում բազմաթիվ թուրքեր հատուկ սովորում էին հայերեն տառերը՝ այս գրականությունը կարդալու համար: Այդ գրականությունից օգտվել են նաև Օսմանյան կայսրության թրքախոս մյուս ազգերը ևս: Հայատառ թուրքերեն գրականությունն այնպիսի բուռն զարգացում ապրեց որչ օսմանյան կայսրության տարածքի ժողովուրդների շրջանում՝ նպաստելով զարթոնքի շրջանի կայացմանը, որ նույնիսկ հարց առաջացավ օսմաներեն տառերը հայերեն այբուբենով փոխարինելու մասին: Սակայն Առաջին համաշխարհային պատերազմը անհնարին դարձրեց այն ընդունելու թուրք առաջադեմ որոշ փաշաների ու մտավորակա-նության ջանքերը:

Կարևոր էր հայերի հրատարակած հայատառ թուրքերենի միջոցով օսմաներենի դասագրքերի գոյությունը: Շատերը նույնիսկ թուրքական բարձրագույն կրթական հաստատություններում օսմաներենը և որոշ այլ առարկաներ սովորել են շնորհիվ հայ լեզվաբանների հեղինակած հայատառ դասագրքերի:

Հայերի մշակութային կյանքը չի սահմանափակվել զուտ հայկա-

⁵ Ստեփանեան Յ., Հայատառ թուրքերեն գրքերի եւ պարբերական մամուլի մատենագիտութիւն, Ստամբուլ, 2005:

կան շրջանակներում: Հայկական վանքերում վարդապետները հավաքել ու ձեռագիր մատյանների մեջ պահ են տվել նաև քրդական մշակույթի նմուշներ՝ հայատառ քրդերենով: Մեզ են հասել քուրդ ժողովրդի ստեղծագործ մտքի արդյունքները՝ տաղարաններ, աղոթքներ, ժողովրդական բանահյուսության նմուշներ՝ առակներ, հանելուկներ, ասացվածքներ, երգեր, նաև բառարաններ:

Մատենադարանի ձեռ.10036-ը տաղարան է, որ գրի է առնված 1869-1881 թթ. Ախալքալաքի շրջանի էշտիա գյուղում գրիչ և տաղերգու Սարգիս Քյուրոզոյանի կողմից: Մասնագետների կարծիքով այն միջնադարյան հայտնի քուրդ փիլիսոփա բանաստեղծ Ֆադիէ Տայրայի (Faqi Tayran (կամ Feqiyê Teyran (1590-1660 թթ.) ստեղծագործությունների եզակի օրինակն է: Ամենայն հավանականությամբ այն քրդական հեքիաթների ազդեցությամբ ստեղծված «Սև ձիու մասին» պոեմն է, որն օտար թշնամիների դեմ քուրդ ժողովրդի պայքարի մասին է: Քրդական բանահյուսության մեջ պոեմն ունեցել է քուրմանջի, սորանի և հայերեն տարբերակներ:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում 1680-1719 թթ. Բաղեշում գրի առնված, ժողովածուի մեջ տեղ գտած քրդական «Տաղ Դնէ Խանմանայ» երգերը, XI դ. հայ-քրդերեն զրուցաբառարանը: Այս ձեռագիր ժողովածուն գտնվում է Փարիզի Ազգային գրադարանի հայկական բաժնում՝ ձեռ. 145, և բաղկացած է 126 թերթերից:

Հայատառ քրդերեն են պարունակում նաև Երևանի Մատենադարանի հ. 737, 771, 4618, 5066, 7117, 8049, 10036 ձեռագրերը: Մենք համոզված ենք, որ այս ձեռագրերը կարևոր նշանակություն ունեն քրդական մշակույթի ուսումնասիրության համար և արդյունքում նոր վերագնահատությունների առիթ կհանդիսանան:

XIX դ. երկրորդ կեսին Պոլսի հայկական հրատարակչատներում տպագրվել են մի շարք հայատառ քրդերեն գրքեր: Դրանց և՛ հրատարակիչները, և՛ հեղինակները միմյանցից տարբեր նպատակներ են հետապնդել:

Քրդաբնակ, քրդախոս գավառների կյանքը, հայ-քրդական հարաբերությունները լայնորեն արտահայտված են ժամանակի հայերեն ու հայատառ թուրքերեն պարբերականների էջերում:

Եվրոպական տերությունները և պապական Հռոմը մեծ ջանքեր

ու միջոցներ են ներդրել Օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդների շրջանում միսիոներական բազմաբնույթ առաքելության իրականացման հետ կապված: Այս առումով ամենալայնարձակ գործողությունների արջի բաժինը պատկանել է ամերիկյան բողոքական BORD միսիոներական կենտրոնին: Մարդասիրական, առողջապահական, կրթական գործունեության քողի ներքո երկիրը քայքայելու, թալանելու քաղաքականություն էր իրականացվում: Այս շրջանում թարգմանվել ու տպագրվել են նաև հայատառ թուրքերեն, հայերեն ու հայատառ քրդերեն Աստուածաշունչ, Ավետարաններ, կրոնաբարոյախոսական, դավանաբանական գրքեր:

Հայատառ քրդերեն տպագիր գրականության մի մասն իրականում կապված է Օսմանյան կայսրության ժողովուրդների մեջ ամերիկյան ու եվրոպական կրոնական տարբեր ուխտերի, միսիոներների գործունեության հետ: Այսօր էլ Բիթլիսում և քրդաբնակ այլ վայրերում կգտնվեն ընտանիքներ, որոնք որպես ընտանեկան սրբություն պահել են հայատառ քրդերեն ու հայատառ թուրքերեն, հայերեն ձեռագիր ու տպագիր ավետարաններ, Աստուածաշունչ: Իհարկե, դրանց մի մասը եզդիական, բռնի թրջացած, քրդացած, հայկական ծագումով ընտանիքներ պետք է լինեն:

Հայատառ քրդերեն տպագիր գրականության մյուս մասը Օսմանյան կայսրությունում XIX դ. արևմտահայության լուսավորական առաքելության արտահայտություններից է:

Այն ստեղծվել է հայ մտավորականության կողմից: Նպատակը քրդախոսներին գրաճանաչ դարձնելն ու նրանց մշակութային, բանավոր ստեղծագործության պահպանելն է:

Բալուի հայ համայնքի առաջնորդ Մկրտիչ վրդ. Տիգրանյանի, Պետրոս Ամիրխանյանի հեղինակած հրատարակությունները քրդերենի և հայերենի դասագրքեր են, այբբենարաններ, բառարաններ, քրդերեն գրականության օրինակներ: Դրանց նմուշները գտնվում են ոչ միայն Երևանի Մատենադարանում և գրադարաններում, այլև աշխարհի տարբեր երկրների հայկական հավաքածուներում և կարոտ են ուսումնասիրության, գոնե մատենագիտական մի աշխատության մեջ ի մի հավաքվելու :

Հայերենի դասագրքերը հայատառ քրդերենով պիտի օգնեին

քրդախոսներին, հայերեն այբուբենը սովորելով, անցնել հայատառ քրդերենի ուսուցման:

Հայատառ քրդերեն գրքերի մասին հանդիպել ենք 1988 թ. թուրքական գիտահանրամատչելի *Tarih ve Toplum* ամսագրի 54-55 համարներում Մեհմեդ Մալմիսանլի մեկ հոդվածի մեջ⁶:

Հայ հեղինակների հեղինակած հայտնի հայատառ քրդերեն տպագիր գրքերի թիվը տասից ավելի է: Ահա քանի օրինակներ հայերի կողմից հրատարակված հայատառ քրդերեն մեզ հայտնի գրքերի, որոնք տպագրվել են Պոլսի Հովհաննես Մյուհենդիսյան, Հ. Պոյաճյան, Ա.Աջճյան հայտնի հրատարակչատների կողմից, ինչպես նաև Բիթլիսի վիլայեթում:

1. Incil bi Qewlê Matteos. Կ.Պոլիս, 1857:

2. Մկրտիչ Տիգրանեան, Այբբենարան քիւրտերէն եւ հայերէն. Ի պէտս մանկանց քիւրտաստանցիոց. Ալիֆալէճիւզ գուրմանճի ու արմէնի Կ.Պոլիս, տպ. Հ. Մյուհենդիսյան, 1860, 55 էջ:

3. Մկրտիչ Տիգրանեան, Այբբենարան քիւրտերէն եւ հայերէն. Ալիֆալէճիւզ գուրմանճի ու արմէնի. Բ.տպ. Կ.Պոլիս, տպ. Հ.Մյուհենդիսյան, 1861, 55 էջ:

4. Peynamê Noêxoiyê İsa-el-Mesihe. Կ.Պոլիս, տպ. Պոյաճյան, 1872:

5. İncila Rabbê Me Hisus Kristos ku Matteos Nivrisi. Կ.Պոլիս, տպ. Պոյաճյան, 1891, 627 էջ:

6. İncila Rabbê Me Hisus Kristos ku Margos Nivrisi. Կ.Պոլիս, տպ. Պոյաճյան, 1911, 87 էջ:

7. İncila Rabbê Me Hisus Kristos ku Xugas Nivrisi. Կ.Պոլիս, տպ. Պոյաճյան, 1911, 148 էջ:

8. İncila Rabbê Me Hisus Kristos ku Hovhannes Nivrisi. Կ.Պոլիս, տպ. Պոյաճյան, 1911, 109 էջ:

9. Emilê Resula. Կ.Պոլիս, տպ. Պոյաճյան, 1911, 138 էջ:

Անկասկած քուրդ մտավորականության այն հատվածը, որը

⁶ Malmisanli Mehmet, Osmanli Döneminde Yazilan Ermeni Kürtçe Eserler Üzerine. Tarih ve Toplum, İst., 1988, N 54-55, s. 58-63.

տեղյակ է հայատառ քրդերեն գրականությունից, երախտապարտ է այն ստեղծողներին՝ քրդերեն գրական-մշակութային ժառանգության որոշ մասի պահպանման համար:

STEPANYAN HASMIK

ARMENIANS IN BITLIS AND ARMENIAN KURDISH HANDWRITTEN AND PRINTED LITERATURE

Bitlis is an ancient city where the Armenians were one of the oldest inhabitants. In 1878-79 the population of province was nearly 400.000, of which Armenians were 250.000. The population of Bitlis was 30.000, of which Armenians were 10.000. The Armenians had a great investment on the economic, trade and cultural life of the province as well as on the development of crafts and the penetration of the capitalistic relations.

Armenians lived mainly with Kurds and Yezidis. During the Genocide the Armenians were forced to leave Bitlis. One of the main cultural ways of Armenians was Armenian Turkish literature. There was also handwritten and printed literature in Armenian as well as in Kurdish. It was made by the Armenians for the Kurds keeping Kurdish folklore, philosophical and literary heritage. We could find published textbooks in Kurdish, the authors of which were Armenians.

Armenian Kurdish Bible, Gospels and other religious books were published by American missionaries.